## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# Ո Ր Ո Շ Ու Մ N 81

27 դեկտեմբերի 2018 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի /այսուհետ՝ համայնք/ վարչական տարածքում գտնվող և որպես սեփականություն <<անհայտ>> քաղաքացիներին փոխանցված հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման նպատակով ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N

186-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 9-րդ 2-րդ և 5-րդ ենթակետերի դրույթները՝

*<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.</u>*

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող և <<անհայտ>> քաղաքացիներին որպես սեփականություն փոխանցված և դրանց նկատմամբ իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունեցող հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու ստորաբաժանմանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նկատմամբ համայնքի իրավունքների պետական գրանցում կատարելու համար

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ - 10 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Մառլեն Ղազարյան

Արմեն Նիկոյան

Կամսար Հովսեփյան

Արմենակ Նաջարյան

Գևորգ Շաբոյան բացակա

Արթուր Ուռումյան բացակա

Վահրամ Սահակյան

Ջավեն Սարգսյան

Գևորգ Ղզրոյան

Սուրեն Գևորգյան

Նաիրի Ալավերդյան

Ազուն Սաղաթելյան բացակա

Բաբիկ Մելիքյան բացակա

Արսեն Վարոսյան

Արսեն Արսենյան բացակա

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ /Արտակ Գևորգյան

ք. Մարալիկ

27 դեկտեմբերի 2018 թվական